


**ОБРАЗОВАНИЕ И СОЦИОЛОГИЯ**

**Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների և կրթության փոխկապակցվածության տեսական հիմնավորումները**

**Չոհրաբյան Լիանա Ռ.**

*Մանկավարժության ասիստենտի հայցորդ,*

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0003-1276-0824>  
[zohrabyanliana79@gmail.com](mailto:zohrabyanliana79@gmail.com)

ՀՏԳ՝ 37.0:321.7; EDN: ONUWXM

DOI: 10.58587/18292437-2025.5-127

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** ժողովրդավարություն, կրթություն, ժողովրդավարական կրթություն, քննադատական մտածողություն, քաղաքացիական մասնակցություն, հաղորդակցական ռազմինալություն, սոցիալական արդարություն, մեդիա գրագիտություն

**Теоретические обоснования взаимосвязи компетентностей демократической культуры и образования**

**Зограбян Лиана Р.**

*Соискатель кафедры педагогики,*

*Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна (Ереван, РА)*

**Аннотация:** Формирование демократической культуры – одна из ключевых задач современного общества. Демократия не ограничивается институциональными структурами, она предполагает активное участие граждан, критическое мышление, ценностную ориентацию и социальную ответственность. Образование является основным инструментом обеспечения жизнеспособности демократии, поскольку оно развивает и формирует не только профессиональные навыки, но и способности, необходимые для активного участия в общественной жизни.

В этой статье анализируются теоретические и концептуальные подходы различных авторов к взаимосвязи образования и демократии. Особое внимание уделяется идеям Джона Дьюи, Паоло Фрейре, Роберта Даля, Юргена Хабермаса, Марты Нуссбаум, Амартии Сен, Бенджамина Барбера, Генри Дженкинса, Этьена Баллибара, Герта Биеста, Дэниела Аллена, Эми Гутман, Дэвида Хелда и Мейры Левинсон. Анализ показывает, что демократическое образование должно способствовать развитию критического мышления, коммуникативных и гражданских способностей человека, а также формированию качеств социальной справедливости и солидарности.

**Ключевые слова и словосочетания:** демократическая культура, демократическое образование, образование, критическое мышление, гражданские способности, коммуникативные навыки, социальная ответственность, солидарность, освободительное образование, активная гражданская позиция, культура участия, медиаграмотность, социальная справедливость, субъектность, глобальная ответственность

**The oretical foundations of the interconnection between democratic culture competences and education**

**Zohrabyan Liana R.**

*PhD Applicant, Chair of pedagogy,*

*Armenian state pedagogical university named after Kh. Abovyan (Yerevan, RA)*

**Abstract.** The formation of democratic culture is considered one of the main challenges of contemporary social science. Democracy is understood not only as an institutional system but also as a process that requires active citizen participation, critical thinking, value orientation, and social responsibility. Education plays a decisive role in sustaining democracy by fostering both professional skills and civic competences essential for meaningful engagement in public life.

The article examines theoretical approaches to the relationship between education and democracy as developed in the works of J. Dewey, P. Freire, R. Dahl, J. Habermas, M. Nussbaum, A. Sen, B. Barber, H. Jenkins, É. Balibar, G. Biesta, D. Allen, A. Gutmann, D. Held, and M. Levinson. The analysis highlights the importance of promoting critical thinking, communicative and civic competences, as well as the values of social justice and solidarity within democratic education.

**Keywords & phrases:** democratic culture, democratic education, education, critical thinking, civic competences, communicative skills, social responsibility, solidarity, emancipatory education, active citizenship, participatory culture, media literacy, social justice, subjectivity, global responsibility

### **Ներածություն**

Ժողովրդավարությունը պարզապես կառավարման համակարգ չէ. այն կենդանի մշակույթ է, որի ուժն ու ապագան որոշվում են կրթությանը և այն քաղաքացիներով, որոնք պատրաստ են մասնակցել հանրային կյանքին՝ որպես նրա ակտիվ ու պատասխանատու անդամներ:

Ժողովրդավարությունը չի կարող արդյունավետ գործել, եթե քաղաքացիները միայն դիտորդի դեր կատարեն. այն պահանջում է նրանց ներգրավվածությունը հանրային կյանքում, բանավեճերում և որոշումների կայացման գործընթացներում:

Կրթությունը հանդիսանում է ժողովրդավարության կենսունակության ապահովման առանցքային գործիք: Այն ոչ միայն փոխանցում է գիտելիք, այլև ձևավորում է մտածողության, հաղորդակցման և համագործակցության կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքի մեջ լիարժեք մասնակցելու համար:

Սույն հոդվածի նպատակն է տեսականորեն վերլուծել կրթության և ժողովրդավարական մշակույթի փոխկապակցվածությունը՝ հիմնվելով տարբեր երկրների փոփոխականների, մանկավարժների և քաղաքական տեսաբանների աշխատությունների վրա և ընդգծել այն հմտություններն ու արժեքները, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարության կայուն զարգացման համար:

### **Գիտական գրականության տեսական հիմքերը**

*Ամերիկացի փոփոխության և մանկավարժ Ջոն Դյուին իր «Ժողովրդավարություն և կրթություն»* աշխատությանը ձևակերպում է ժողովրդավարական կրթության փոփոխության հիմքերը: Չ. Դյուինի համար ժողովրդավարությունը ոչ միայն կառավարման ձև է, այլև կենսակերպ, որը պայմանավորում է հասարակական կյանքի կազմակերպումը և քաղաքացիների փոխհարաբերությունները: Նա շեշտում է, որ կրթությունը պետք է դիտարկվի որպես փորձի վերակառուցման շարունակական գործընթաց: Չ. Դյուին գրում է. «Կրթությունը փորձի վերակազմակերպումն է կամ վերակառուցումը, որը նոր իմաստ է հաղորդում նրան և ավելացնում է հետագա փորձը ուղղորդելու կարողությունը» [6, էջ 81]: Այսպիսով, կրթությունը ոչ թե է գիտելիքի, կարողունակությունների և հմտությունների պարզ փոխանցման գործընթաց է, այլ սոցիալական, մշակութային և մտավոր զարգացման միջավայր, որտեղ անհատը դառնում է հանրային կյանքի ակտիվ մասնակից:

Չ. Դյուինի տեսության առանցքային գաղափարներից է այն, որ. «Կրթությունը պետք է ապահովի անհատական անի և հանրային շահի ներդաշնակ համադրումը» [6, էջեր 88-89]: Նա պնդում էր, որ միայն այն կրթական համակարգը, որը խթանում է համագործակցությունը, քննադատական մտածողությունը և սոցիալական պատասխանատվությունը, կարող է դաստիարակել այնպիսի քաղաքացիներ, ովքեր պատրաստ են մասնակցել ժողովրդավարական հասարակության կառավարմանը:

Բացի այդ, Չ. Դյուին ժողովրդավարությունը բնորոշում է որպես «համատեղ կյանքի ձև», որտեղ քաղաքացիները ներգրավված են փոխադարձ փորձի փոխանակման մեջ: Նրա ձևակերպմամբ. «Ժողովրդավարությունը ավելին է, քան կառավարման ձև. այն նախևառաջ համատեղ կյանքի և փոխադարձ հաղորդակցված փորձի ձև է» [6, էջ 91]: Այս ըմբռնումը ժողովրդավարությանը տալիս է խորքային սոցիալական և մշակութային իմաստ՝ ընդգծելով փոխգործակցության և հանրային քննարկումների դերը:

Այսպիսով, Չոն Դյուինի «Ժողովրդավարություն և կրթություն» աշխատությունը ելակետային դրույթ է դառնում կրթության՝ որպես ժողովրդավարության շարժիչ ուժի ընկալման համար:

*Բրազիլացի մանկավարժ և փոփոխության Պատրիսիա Ֆրեյրեն իր «Ճնշվածների մանկավարժություն»* աշխատությունում կրթությունը դիտարկում է որպես ազատագրման գործընթաց: Նրա հայեցակարգում ավանդական կրթական մոդելը բնորոշվում է որպես «բանկային մոդել», որտեղ ուսուցիչը հանդես է գալիս որպես գիտելիքի մենաստեր և այն «ցնում» է սովորողի մեջ. «Կրթությունը վերածվում է ավանդադրման գործողության, որտեղ ուսանողները պահոցներն են, իսկ ուսուցիչը՝ ավանդատուն» [7, էջ 72]:

Պ. Ֆրեյրեն առաջարկում է «խնդրահարույց ուսուցման» կամ երկխոսական մոդել, որտեղ ուսուցիչն ու սովորողը հանդես են գալիս որպես գործընկերներ: Այս մոդելում նրանք համատեղ վերլուծում են սոցիալական իրականությունը, քննարկում խնդիրները և փնտրում դրանց լուծումները: Երկխոսական կրթությունը խթանում է քննադատական գիտակցությունը, որը հնարավորություն է տալիս սովորողներին ոչ միայն ճանաչել իրենց սոցիալական միջավայրը, այլև գործել դրա փոխակերպման ուղղությամբ [7, էջ 80]:

Պ. Ֆրեյրեի գաղափարների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ճնշվածների ազատագրումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ

նրանք դառնում են իրենց կրթության ակտիվ սուբյեկտներ. «Ճնշվածները պետք է լինեն իրենց իսկ ազատագրման պայքարի օրինակ» [7, էջ 54]: Կրթությունն այս դեպքում վերածվում է քաղաքական ակտիվության դաշտի, որտեղ ձևավորվում է ազատության, արժանապատվության և փոփոխության կարողությունը:

Այս տեսությունը կարևոր նշանակություն ունի ժողովրդավարական կրթության համար: Այն ընդգծում է, որ կրթությունը չի կարող սահմանափակվել միայն գիտելիքի փոխանցմամբ. այն պետք է լինի ազատագրող գործընթաց, որը ձևավորում է սոցիալական պատասխանատվություն կրող և հասարակության մեջ փոփոխություն բերող քաղաքացիներ:

**Ամերիկացի քաղաքական տեսաբան Ռոբերտ Դահլը իր «Ժողովրդավարությունն ու դրա քննադատները»** աշխատությունում ներկայացնում է ժողովրդավարության ինստիտուցիոնալ և մշակութային հիմքերի համապարփակ վերլուծություն: Ըստ Ռ. Դահլի մոտեցման՝ ժողովրդավարական հասարակության կայունությունն ու կենսունակությունը հնարավոր են միայն կրթված և տեղեկացված քաղաքացիների պայմաններում:

Նրա կարծիքով՝ ժողովրդավարության կենսունակությունը կախված է այն բանից, թե արդյո՞ք քաղաքացիները ունակ են ընկալել քաղաքական բազմազանությունը, գնահատել մրցակցող գաղափարները և կատարել գիտակցված որոշումներ: Ռ. Դահլը պնդում է, որ ժողովրդավարական քաղաքական մշակույթն ու ժողովրդավարական ինստիտուտները փոխադարձաբար ուժեղացնում են միմյանց: Առանց ժողովրդավարական նորմերին աջակցող մշակույթի՝ ինստիտուտները կարող են վերածվել «դատարկ պատյանի» [5, էջ 27]:

Ռ. Դահլը նաև շեշտում է, որ կրթության դերը ժողովրդավարության մեջ պետք է որպես հիմնարար մեխանիզմ: Նրա համոզմամբ՝ կրթված քաղաքացիները ոչ միայն գրագետ են, այլև ունակ են ընկալել քաղաքական գործընթացների բարդությունը, տարբեր գաղափարների հակասությունները և դրանցից բխող հետևանքները: Այսպիսով, նրանք դառնում են լիարժեք մասնակիցներ հանրային քննարկումներին և որոշումների կայացման գործընթացին [5, էջ 45]:

Այսպիսով, Ռոբերտ Դահլի տեսությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարության կենսունակության համար անհրաժեշտ է ոչ միայն ինստիտուցիոնալ կառուցվածքների առկայությունը, այլև այնպիսի կրթական հիմքեր, որոնք դաստիարակում են տեղեկացված, բանական և պատասխանատու քաղաքացիներ:

**Գերմանացի փիլիսոփա Յուրգեն Հարերմասը իր «Հանրային տարածքի փոխակեր-**

**պումը» և «Հաղորդակցական գործողությունների տեսությունը»** աշխատություններում ձևակերպում է հանրային բանավեճի և հաղորդակցական ռացիոնալության հիմնարար սկզբունքները: Նրա մոտեցմամբ ժողովրդավարությունը կենսունակ է միայն այն դեպքում, երբ քաղաքացիները մասնակցում են ազատ և հավասար պայմաններում ընթացող հանրային քննարկումներին [9, էջեր 27-43]:

Հարերմասի տեսության առանցքում է նաև այն համոզմունքը, որ կրթությունը պետք է զարգացնի հաղորդակցական կարողություններ՝ հնարավորություն տալով քաղաքացիներին դառնալ բանավեճի լիարժեք մասնակիցներ և կարողանալ քննարկումների միջոցով կայացնել միասնական կամ արդար որոշումներ [10, էջեր 86-101]:

Այսպիսով, Հարերմասի տեսությունը ժողովրդավարական կրթության հիմքում դնում է հաղորդակցական հմտությունների զարգացումը:

**Ամերիկացի փիլիսոփա Մարթա Նուսբաումը իր «Ծահույթ չհետապնդող. ինչու՞ է ժողովրդավարությունը կարիք ունենում հումանիտար գիտությունների» և «Հնարավորությունների ստեղծում»** աշխատություններում կրթությունը դիտարկում է ոչ միայն որպես մասնագիտական հմտությունների ձևավորման միջոց, այլ որպես մարդու ազատության, արժանապատվության և սոցիալական արդարության հիմք:

Մ. Նուսբաումը քննադատում է ժամանակակից կրթության չափազանց «տնտեսավարկային» մոտեցումը, որը կենտրոնանում է շուկայում մրցունակ հմտությունների զարգացման վրա: Նրա կարծիքով՝ նման մոտեցումը վտանգում է ժողովրդավարության հիմքերը, քանի որ այն անտեսում է հումանիտար առարկաների դերը: Փիլիսոփայությունը, գրականությունը, պատմությունը և արվեստը, ըստ Մ. Նուսբաումի, ձևավորում են այնպիսի մտավոր և էմոցիոնալ կարողություններ, ինչպիսիք են կարեկցանքը, քննադատական մտածողությունը, էթիկական պատասխանատվությունը և ուրիշների հանդեպ հարգանքը [14, էջեր 22-25, 95-97]:

«Հնարավորությունների ստեղծում» աշխատությունում Մ. Նուսբաումը զարգացնում է «կարողունակությունների մոտեցումը»՝ առաջարկելով այնպիսի հենք, որի միջոցով կարելի է գնահատել հասարակության զարգացումը: Այս մոտեցմամբ կրթությունը պետք է նպաստի այնպիսի հիմնական կարողունակությունների ձևավորմանը, ինչպիսիք են մտածելու, երագելու, սիրելու, համագործակցելու և հասարակական կյանքին մասնակցելու կարողունակությունները: [14, էջեր 33-34, 70-75]:

Նրա ձևակերպմամբ՝ կրթության նպատակն է դաստիարակել այնպիսի քաղաքացիներ, որոնք ունակ են գործել լիարժեք մարդկային արժանապատվությամբ [14, էջ 78]:

Ս. Նուսբաումի հայեցակարգը կարևորում է նաև գլոբալ պատասխանատվության գաղափարը, «Մենք կարիք ունենք աշխարհի քաղաքացիների, որոնք կարող են հասկանալ այլ երկրների խնդիրները և իրենց համարել գլոբալ համայնքի մաս» [14, էջ 7]: Ժողովրդավարությունը, նրա համոզմամբ, չի կարող սահմանափակվել ազգային պետությունների շրջանակներում. այն պետք է ներառի համամարդկային խնդիրների ընկալում և դրանց նկատմամբ բարոյական պատասխանատվությունը: Այս իմաստով կրթությունը կոչված է զարգացնելու համերաշխություն և համաշխարհային քաղաքացիական գիտակցություն [14, էջեր 80-90; 15, էջեր 96-99]:

Այսպիսով, Մարթա Նուսբաումի մոտեցումը ցույց է տալիս, որ ժողովրդավարական կրթությունը պետք է դուրս գա գուտ գործնական և տնտեսական սահմաններից: Այն պետք է նպաստի ամբողջական անձնավորության ձևավորմանը, որն ունակ է քննադատաբար մտածել, կարեկցել և բարոյական պատասխանատվություն ստանձնել ոչ միայն սեփական համայնքի, այլև համաշխարհային հանրության հանդեպ:

**Հնդիկ տնտեսագետ և փիլիսոփա Ամարտյա Սենը** իր «**Չարգացումը որպես ազատություն**» աշխատությունում ձևակերպում է զարգացման այնպիսի ըմբռնում, որը դուրս է գալիս գուտ տնտեսական աճի շրջանակից՝ նշելով, որ իսկական զարգացումը չափվում է ոչ թե համախառն ներքին արդյունքով կամ եկամուտների մակարդակով, այլ մարդկանց ունեցած իրական ազատություններով և դրանց իրացման հնարավորություններով. «**Չարգացումը պետք է դիտարկել որպես գործընթաց, որի միջոցով ընդլայնվում են մարդկանց ունեցած իրական ազատությունները**» [16, էջ 3]: Գլխավոր թեզն այն է, որ զարգացումը պետք է հասկացվի որպես ազատությունների ընդլայնում: Այս ազատությունները ներառում են ոչ միայն քաղաքական մասնակցությունը, այլև սոցիալական, մշակութային և կրթական հնարավորությունները: Ա. Սենը պնդում է, որ առանց կրթության անհատները գրկվում են իրենց ընտրությունների իրացման իրական հնարավորությունից, հետևաբար չեն կարող լիարժեք մասնակցել հասարակական և քաղաքական կյանքին [16, էջեր 148-150]:

Կրթությունը Սենի մոտ ունի երկակի բնույթ: Նախ, այն ինքնին ազատություն է, քանի որ մարդկանց հնարավորություն է տալիս զարգացնել մտածողությունը, ձևավորել սեփական

տեսակետներ և իրականացնել ինքնուրույն որոշումներ [16, էջեր 36-37]: Երկրորդ, այն գործիք է՝ ընդլայնելու մյուս ազատությունները, օրինակ՝ աշխատանքի, քաղաքական մասնակցության և սոցիալական ակտիվության ոլորտում [16, էջեր 143-144]:

Այսպիսով, կրթությունը դիտարկվում է ոչ միայն որպես տնտեսական առաջընթացի գործիք, այլ որպես մարդու արժանապատվության և ժողովրդավարական հասարակության կենսունակության պայման:

**Ամերիկացի քաղաքական տեսաբան Բենջամին Բարբերը** իր «**Ակտիվ ժողովրդավարություն**» աշխատությունում ժողովրդավարությունը բաժանում է «պասիվ» և «ակտիվ» մոդելների: «Պասիվ ժողովրդավարության» մոդելում քաղաքացիները սահմանափակվում են պասիվ մասնակցությամբ՝ ընտրությունների ժամանակ քվեարկությամբ, իսկ քաղաքական գործընթացների հիմնական վերահսկողությունը մնում է պետական ինստիտուտների և էլիտաների ձեռքում [3, էջեր 143-145]:

Իսկ «ակտիվ ժողովրդավարությունը» ենթադրում է քաղաքացիների մշտական և ակտիվ ներգրավվածություն՝ հանրային կյանքի բոլոր մակարդակներում. «**Ուժեղ ժողովրդավարությունը քաղաքականությունը դարձնում է կենդանի գործընթաց, որտեղ քաղաքացիները մշտապես մասնակցում են քննարկումներին և որոշումներին կայացմանը**» [3, էջ 151]:

Բ. Բարբերի համար կրթությունը ոչ միայն գիտելիքի փոխանցման միջոց է, այլև քաղաքական մասնակցության դաստիարակման հիմնական հարթակ: Կրթական միջավայրում ձևավորվում են այնպիսի կարողունակություններ, ինչպիսիք են համագործակցությունը, հանրային քննարկումներին մասնակցելու ունակությունը և ընդհանուր բարիքի համար պատասխանատվությունը [3, էջեր 232-235]:

Կրթությունը, ըստ Բ. Բարբերի, պետք է դաստիարակի ակտիվ քաղաքացի, որը պատրաստ է ոչ միայն օգտվել իր իրավունքներից, այլև մասնակցել հանրային որոշումների կայացման գործընթացներին: Կրթությունը հանդիսանում է «ակտիվ ժողովրդավարության» հիմնական նախապայմանը, քանի որ այն ապահովում է քաղաքացիների լիարժեք ներգրավվածությունը հանրային կյանքում և քաղաքական գործընթացներում [3, էջեր 239-241]: Այս մոտեցումը ժողովրդավարական կրթության մեջ ընդգծում է այն գաղափարը, որ առանց կրթության միջոցով ձևավորված ակտիվ քաղաքացիության՝ ժողովրդավարությունը չի կարող լինել կենսունակ:

**Ամերիկացի մեդիա հետազոտող Հենրի Ժենկինսը** իր «**Մասնակցային մշակույթի մարտահրավերների առաջ**» աշխատությունում

առանձնակի շեշտադրվում է նոր մեդիայի և ժողովրդավարական ներգրավվածության փոխհարաբերությանը: Ժենկինսը պնդում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և մեդիայի դինամիկ փոփոխությունները ձևավորում են նոր սոցիալական միջավայր, որտեղ քաղաքացիները դառնում են ոչ միայն տեղեկատվության սպառողներ, այլև ակտիվ ստեղծագործողներ և հաղորդակցության մասնակիցներ [12, էջեր 30-32]:

Նրա ներկայացրած «մասնակցային մշակույթ» հասկացությունը կարևոր է ժողովրդավարական կրթության տեսանկյունից: Այս մշակույթում հիմնական արժեքները կապված են համագործակցության, համատեղ ստեղծագործության, գիտելիքի փոխանակման և տարբեր մեդիա հարթակներում ակտիվ մասնակցության հետ [12, էջեր 31-32]: Հ. Ժենկինսը շեշտում է, որ առանց մեդիա գրագիտության զարգացման քաղաքացիները դժվար թե կարողանան լիարժեք օգտվել այդ հնարավորություններից և ներգրավվել ժամանակակից ժողովրդավարական գործընթացներում [12, էջեր 19-21]:

Կրթության առաքելությունը, ըստ Հ. Ժենկինսի, այն է, որ դպրոցներն ու կրթական հաստատությունները պետք է ապահովեն սովորողների մեդիագրագիտության զարգացումը: Սա նշանակում է ոչ միայն տեխնիկական հմտությունների ձեռքբերում, այլև քննադատական մտածողություն, տեղեկատվության վերլուծության և համատեքստային իմացության կարողություն: Կրթությունը պետք է դաստիարակի այնպիսի քաղաքացիներ, ովքեր ունակ են պատասխանատու և ստեղծագործական մասնակցության՝ թվային և հանրային միջավայրերում [12, էջ 56]:

Այսպիսով, Հենրի Ժենկինսի տեսությունը լրացնում է ժողովրդավարական կրթության դասական մոդելները՝ ընդգծելով ժամանակակից տեխնոլոգիաների և մեդիա գրագիտության կարևորությունը:

**Ճրանսիացի փիլիսոփա Էթյեն Բալիբարը իր «Քաղաքացիություն»** աշխատությունում քաղաքացիության հասկացությունը ներկայացնում է որպես բազմաշերտ և դինամիկ երևույթ: Նա շեշտում է, որ քաղաքացիությունը չի կարող սահմանափակվել միայն իրավական կարգավիճակով կամ պետության կողմից տրված իրավունքների և պարտականությունների համակարգով: Քաղաքացիությունը պետք է ընկալվի որպես ակտիվ կարողունակություն, որը ներառում է մասնակցություն հանրային կյանքին, ինքնակազմակերպման ունակություն և համերաշխության արժեքների ձևավորում [2, էջեր 45-47]:

Է. Բալիբարի տեսության կարևորագույն տարրը այն է, որ քաղաքացիությունը պետք է

դաստիարակվի և զարգանա կրթական համակարգի միջոցով: Կրթությունը դառնում է այն հիմնական գործիքը, որի միջոցով հնարավոր է ստեղծել ակտիվ քաղաքացիական մշակույթ: Կրթական միջավայրում ձևավորվում են հասարակական քննարկումներին մասնակցելու, համախմբվելու և հանրային շահի շուրջ համերաշխություն կառուցելու հմտություններ [2, էջեր 78-81]: Նրա համոզմամբ՝ ժողովրդավարությունը չի կարող կայուն լինել, եթե քաղաքացիությունը մնում է միայն ֆորմալ իրավական կարգավիճակ: Այն իրական արժեք է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ քաղաքացիները դառնում են հանրային կյանքի ակտիվ դերակատարներ: Այս գործընթացում կրթությունը ոչ միայն փոխանցում է գիտելիքներ, այլև նպաստում է այնպիսի ունակությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են սոցիալական պատասխանատվության և հասարակական համագործակցության համար [2, էջեր 102-105]:

Է. Բալիբարի մոտեցումը կարևոր է հատկապես ժամանակակից համատեքստում, երբ գլոբալիզացիան, միգրացիան և բազմազանության աճը վերաձևում են քաղաքացիության սահմանները: Նրա կարծիքով՝ կրթական համակարգը պետք է պատրաստի քաղաքացիներին սպրել բազմամշակույթային և բազմազան հասարակություններում՝ պահպանելով հանրային համերաշխությունը և ժողովրդավարական արժեքները [2, էջեր 190-194]:

Այսպիսով, Էթյեն Բալիբարի «Քաղաքացիություն» աշխատությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարական կրթությունը չի կարող սահմանափակվել իրավական գիտելիքների փոխանցմամբ. այն պետք է ձևավորի ակտիվ և համերաշխ քաղաքացիներ, որոնք ունակ են ոչ միայն օգտվել իրենց իրավունքներից, այլև կիսել պատասխանատվությունը հանրային կյանքի և ժողովրդավարության պահպանման համար:

**Նիդերլանդացի փիլիսոփա Գերտ Բիեստան իր «Ժողովրդավարություն և կրթություն. սպազայի կրթության փիլիսոփայություն»** աշխատությունում քննադատում է ժամանակակից կրթական համակարգի չափանիշային և չափելի արդյունքներին ուղղված մոտեցումները: Նրա կարծիքով՝ կրթության իրական նպատակը չի կարելի սահմանափակել միայն գիտելիքի և հմտությունների փոխանցմամբ կամ արդյունավետության ցուցանիշներով [4, էջեր 8-10]:

Գ. Բիեստան առաջարկում է կրթությունը դիտարկել երեք հիմնական գործառույթների շրջանակում. սոցիալականացում, անհատականացում (սուբյեկտայնա ցում), որակավորում: Սոցիալականացումը վերաբերում է անհատի ինտեգրմանը հասարակության մշակույթային ու սոցիալական նորմերին, որակավորումը՝ մասնագիտական և գործնական հմտությունների ձևա-

վորմանը, իսկ անհատականացումը (սուբյեկտայնացումը)՝ այն գործընթացին, որի միջոցով անհատը դառնում է ինքնուրույն մտածող և պատասխանատու սուբյեկտ [4, էջեր 27-29]:

Ժողովրդավարության տեսանկյունից Գ. Բիեստան հատկապես կարևորում է սուբյեկտայնացման գործառույթը: Նրա համոզմամբ՝ կրթությունը պետք է հնարավորություն ընձեռի սովորողներին ձևավորվել որպես ինքնուրույն անհատներ, որոնք ունակ են քննադատական մտածողության, պատասխանատու որոշումների կայացման և հանրային կյանքին ակտիվ մասնակցության [4, էջեր 63-66]: Այս մոտեցումը հակադրվում է կրթության զուտ գործիքային ըմբռնմանը, որտեղ առաջնայինը տնտեսական արդյունքն է:

Գ. Բիեստան պնդում է, որ ժողովրդավարական կրթության նպատակն է դաստիարակել ոչ թե պարզապես հարմարվող կամ արդյունավետ մասնագետներ, այլ այնպիսի քաղաքացիներ, որոնք ունակ են կասկածելու, հարցադրելու և քննարկելու հասարակական կյանքի հիմնահարցերը [4, էջեր 105-108]:

Այսպիսով, Գերտ Բիեստայի մոտեցումը ընդգծում է, որ կրթության առանցքում պետք է դրվի անհատի սուբյեկտայնության զարգացումը: Միայն այդ դեպքում է հնարավոր ձևավորել այնպիսի քաղաքացիներ, ովքեր կկարողանան լինել ոչ թե միայն քաղաքական և սոցիալական գործընթացների պասիվ մասնակիցներ, այլ ժողովրդավարության ակտիվ և պատասխանատու գործիչներ:

**Ամերիկացի քաղաքական տեսաբան Դանիել Ալլենն իր «Խոսել օտարների հետ. քաղաքացիության մտահոգությունները՝ սկսած Բրաուն ընդդեմ Կրթական խորհրդի գործից»** աշխատությունում վերլուծում է քաղաքացիական վստահության, փոխհարաբերությունների և հաղորդակցության հիմնարար դերը ժողովրդավարական հասարակության կայացման գործում:

Դ. Ալլենը առանձնահատուկ կարևորություն է տալիս հասարակական հարաբերություններում առկա «օտարության» հաղթահարմանը: Նրա համոզմամբ՝ ժողովրդավարական կյանքը պահանջում է, որ քաղաքացիները կարողանան կապ հաստատել միմյանց հետ՝ անկախ սոցիալական, ռասայական կամ մշակութային պատկանելությունից: Եթե հասարակության անդամները մնում են միմյանց համար «օտարներ», ապա ժողովրդավարությունը չի կարող լիարժեք գործել, քանի որ հանրային վստահության պակասը խոչընդոտում է համագործակցությանը և համերաշխությանը [1, էջեր 28-32]: Կրթության դերը այս համատեքստում դառնում է առանցքային: Դ. Ալլենի կարծիքով՝ կրթական համակարգը պետք է

սովորեցնի մարդկանց արդյունավետ հաղորդակցման, երկխոսության և փոխադարձ հարգանքի հմտություններ: Դպրոցը պետք է լինի այնպիսի տարածք, որտեղ սովորողները կարող են հանդիպել տարբեր փորձառություններով և արժեքներով մարդկանց, սովորել լսել միմյանց և կառուցել վստահության վրա հիմնված հարաբերություններ [1, էջեր 157-160]:

Դ. Ալլենը նաև ընդգծում է, որ ժողովրդավարական հասարակությունում քաղաքական և սոցիալական հարաբերությունները չեն կարող ամրապնդվել միայն իրավական ինստիտուտների միջոցով: Դրանք պահանջում են նաև բարոյական հիմքեր՝ փոխվստահություն, արդարություն և փոխադարձ հարգանք: Առանց այս արժեքների ժողովրդավարությունը մնում է ձևական [1, էջեր 265-270]:

Այսպիսով, Դանիել Ալլենի տեսությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարական կրթությունը պետք է զարգացնի ոչ միայն մտավոր կարողություններ, այլև էթիկական և հաղորդակցական հմտություններ: Միայն այս կերպ հնարավոր կլինի ձևավորել այնպիսի քաղաքացիներ, որոնք ունակ են հաղթահարելու սոցիալական բաժանարար գծերը և կառուցելու վստահության վրա հիմնված հանրային համակեցություն:

**Ամերիկացի քաղաքական փիլիսոփա Էյմի Գուտմանն իր «Ժողովրդավարական կրթություն»** աշխատությունում զարգացնում է կրթության և ժողովրդավարության փոխկապակցվածության հիմնարար գաղափարները: Նրա տեսության կենտրոնում է այն համոզմունքը, որ կրթությունը պետք է նպաստի ոչ միայն մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձևավորմանը, այլև քաղաքացիների ազատության, ինքնուրույնության և հանրային կյանքում ակտիվ մասնակցության զարգացմանը [8, էջեր 12-15]:

Է. Գուտմանի համար ժողովրդավարական կրթության հիմնական նպատակը քաղաքացիների «ինքնուրույնության դաստիարակությունն» է: Նա պնդում է, որ կրթությունը պետք է սովորեցնի մարդկանց ոչ թե պարզապես հարմարվել սոցիալական կանոններին կամ ենթարկվել իշխանությանը, այլ զարգացնել սեփական դատողությունները, քննադատական մտածողությունը և պատասխանատվության զգացումը: Այսպիսով, կրթական գործընթացը դառնում է ազատության և քաղաքական մասնակցության վարժարան [8, էջեր 22-26]: Է. Գուտմանն ընդգծում է, որ ժողովրդավարական հասարակություններում կրթական ծրագրերը և արժեքային կողմնորոշումները չպետք է թելադրվեն միայն պետական կառույցների կամ մասնավոր խմբերի կողմից: Դրանք պետք է քննարկվեն հանրային բանավեճի միջոցով, քանի

որ կրթությունը հանդիսանում է հասարակության բոլոր անդամների ընդհանուր շահը և կրթությունը պետք է ծառայի ոչ թե էլիտար խմբերի, այլ ամբողջ հասարակության ժողովրդավարական կարիքներին [8, էջեր 42-45]:

Է. Գուտմանի տեսակետով՝ կրթությունը չի կարող չեզոք լինել. այն անխուսափելի որեն կրում է արժեքային բովանդակություն: Հետևաբար, ժողովրդավարական կրթության խնդիրն այն է, որ կրթությունը ձևավորի արժեքներ, որոնք համատեղելի են ազատության, հավասարության և սոցիալական արդարության սկզբունքների հետ [8, էջեր 50-52]:

Այսպիսով, Էյմի Գուտմանի «Ժողովրդավարական կրթություն» աշխատությունը կարևոր տեղ է գրադեցնում ժամանակակից կրթության փիլիսոփայության մեջ՝ ցույց տալով, որ կրթությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես անձի զարգացման միջոց, այլև որպես ժողովրդավարական հասարակության կայունության և առաջընթացի հիմնարար պայման:

**Բրիտանացի քաղաքական տեսաբան Դեյվիդ Հեյդն իր «Ժողովրդավարության մոդելներ»** աշխատությունում առաջարկում է ժողովրդավարության պատմական և տեսական տարբեր մոդելների համապարփակ վերլուծություն՝ ընդգրկելով դասական հին հունական մոդելից մինչև ժամանակակից ազատատենչ և մասնակցային ժողովրդավարության ձևերը:

Դ. Հեյդնի մոտեցմամբ ժողովրդավարությունը բազմաձև և փոփոխական երևույթ է, որը տարբեր պատմական պայմաններում ստանում է տարբեր ձևակերպումներ: Նրա աշխատությունը ցույց է տալիս, թե ինչպես են ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքական մշակույթը փոխկապակցված միմյանց հետ և ինչպես է յուրաքանչյուր մոդել արձագանքում հասարակության սոցիալական ու քաղաքական խնդիրներին [11, էջեր 1-12]: Չնայած Դ. Հեյդնը հիմնականում կենտրոնանում է ժողովրդավարության ինստիտուցիոնալ և տեսական կառուցվածքների վրա, նրա վերլուծությունից հետևում է, որ ժողովրդավարության կայունությունն ու արդյունավետությունը պայմանավորված են նաև քաղաքացիների կրթական մակարդակով: Որքան ավելի տեղեկացված և կրթված են քաղաքացիները, այնքան մեծ է նրանց կարողությունը մասնակցելու քաղաքական քննարկումներին, ձևավորելու սեփական տեսակետներ և պատասխանատվությամբ մոտենալու հանրային որոշումների կայացմանը [11, էջեր 25-32]:

Դ. Հեյդնի տեսությունը հատկապես կարևոր է կրթության և ժողովրդավարության փոխկապակցվածության ուսումնասիրության համար այն ատումով, որ այն ընդգծում է քաղաքական մասնակցության բազմազան ձևերը: Ժողովրդավարության տարբեր մոդելներում կրթության դերը միշտ կենսական է մնում, քանի որ այն ապահովում է այնպիսի կարողունակությունների զարգացում, որոնք քաղաքացիներին դարձնում են լիարժեք

դերակատարներ հանրային կյանքում [11, էջեր 102-108]:

Այսպիսով, Դեյվիդ Հեյդնի «Ժողովրդավարության մոդելներ» աշխատությունը արժեքավոր ներդրում է ժողովրդավարության տեսության մեջ՝ ցույց տալով, որ ժողովրդավարությունը չի կարելի դիտարկել միայն որպես ինստիտուցիոնալ համակարգ: Այն նաև մշակութային և կրթական գործընթաց է, որի հաջողությունը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի քաղաքացիներ են դաստիարակվում հասարակության կրթական համակարգում:

**Ամերիկացի կրթության փիլիսոփա Մեյրա Լևինսոնն իր «Ոչ մի քաղաքացի չպետք է դուրս մնա»** աշխատության մեջ վերլուծում է կրթական անհավասարությունների և դրանց ժողովրդավարության վրա ունեցած հետևանքների խնդիրը: Մ. Լևինսոնը պնդում է, որ ժողովրդավարությունը չի կարող լիարժեք գործել այն պայմաններում, երբ հասարակության որոշ խմբեր գրկված են որակյալ կրթությունից և, հետևաբար, նաև՝ քաղաքական ու հասարակական մասնակցության հնարավորությունից: Նրա կարծիքով՝ կրթական անհավասարությունները վերարտադրում են սոցիալական անհավասարությունները և խորացնում են քաղաքական գործընթացներից որոշակի խմբերի դուրս մղվածությունը: Այս երևույթը ոչ միայն սահմանափակում է անհատների ազատության և ինքնարտահայտման հնարավորությունները, այլև խաթարում է ժողովրդավարական հասարակության հիմնայունները՝ հավասարությունը, արդարությունը և ներառականությունը [13, էջեր 15-45]:

Մ. Լևինսոնի տեսության կարևորագույն բաղադրիչը «քաղաքացիական լիազորությունների բացը» հասկացությունն է: Նա ցույց է տալիս, որ բարձր և ցածր սոցիալ-տնտեսական խավերի միջև գոյություն ունի մասնակցության և ներգրավվածության էական տարբերություն: Հարուստների երեխաները ստանում են այնպիսի կրթություն, որը զարգացնում է նրանց քննադատական մտածողությունը, հաղորդակցական հմտությունները և հասարակական ներգրավվածության կարողությունը, ադրաստ համայնքների երեխաները հաճախ գրկվում են այս հնարավորություններից [13, էջեր 50-70]:

Մ. Լևինսոնի համոզմամբ՝ ժողովրդավարական կրթությունը պետք է ուղղված լինի այս բացը վերացնելու գործնական քայլերին: Դպրոցները և կրթական քաղաքականությունները պետք է ապահովեն հավասար կրթական հնարավորություններ բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակից: Միայն այդ դեպքում կարելի է խոսել իսկապես ներառական և կայուն ժողովրդավարության մասին [13, էջեր 100-105]:

Այսպիսով, Մեյրա Լևինսոնի «Ոչ մի քաղաքացի չպետք է դուրս մնա» աշխատությունը ընդգծում է կրթության և սոցիալական արդարության անքակտելի կապը: Նրա տեսությունը փաստում է, որ առանց հավասար կրթական

հնարավորությունների հասարակության բոլոր անդամների համար ժողովրդավարությունը մնում է ձևական:

### Քննարկում

Վերոնշյալ տեսությունները ցույց են տալիս, որ կրթությունը ժողովրդավարության կենսունակության համար ոչ թե օժանդակ գործիք է, այլ նրա հիմնարար պայմանը:

Ջ. Դյուին կրթությունը դիտարկում էր որպես փորձի վերակառուցում, որը նպաստում է անհատի և հանրային շահի ներդաշնակ համադրմանը, իսկ Պ. Ֆրեյրեն առաջարկում էր երկխոսային մոդել, որը զարգացնում է ճնշվածների ազատագրությունն ու քննադատական գիտակցությունը: Յ. Հաբերմասը շեշտում էր հաղորդակցական կարողությունների կարևորությունը հանրային բանավեճում, Մ. Նուսբաումը պաշտպանում էր հումանիտար առարկաների արժեքը՝ որպես կարեկցանքի և քննադատական մտածողության ձևավորման միջոց, իսկ Ա. Մենը կրթությունը դիտարկում էր որպես ազատություն և ազատությունների ընդլայնման միջոց: Հ. Ժենկինսը ցույց էր տալիս մեղիա գրագիտության և մասնակցային մշակույթի կարևորությունը, Է. Բալիբարը՝ քաղաքացիությունը որպես ակտիվ կարողունակություն, Գ. Բիեստան՝ սուբյեկտայնության ձևավորման նշանակությունը, Դ. Ալլենը՝ հանրային վստահության և «օտարության» հաղթահարման դերակատարությունը, Է. Գուտմանը՝ կրթության արժեքային կողմնորոշումները, Դ. Հելդը՝ ժողովրդավարության մոդելների բազմազանությունը, իսկ Մ. Լևինսոնը շեշտում էր կրթական անհավասարությունների վտանգը ժողովրդավարության համար: Ռ. Դահլը առանձնացնում էր կրթության դերը ժողովրդավարության ինստիտուցիոնալ կայունության մեջ, իսկ Բ. Բարբերը կրթությունը կապում էր ակտիվ քաղաքացիության դաստիարակության հետ:

Այս բոլոր տեսությունները միահյուսվում են մի ընդհանուր պատկերացման մեջ. ժողովրդավարական կրթությունը պետք է դաստիարակի քննադատական մտածողությամբ, հանդուրժողականությամբ, ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ, ինքնաճանաչմամբ և հաղորդակցական կարողություններով զինված, պատասխանատու քաղաքացի, որը պատրաստ է մասնակցել հանրային կյանքին և նպաստել հասարակության համադրված զարգացմանը:

### Եզրակացություն

Ժողովրդավարական կրթության տեսությունները ցույց են տալիս, որ կրթությունը և ժողովրդավարությունը փոխկապակցված են ոչ թե մեխանիկորեն, այլ խորքային սոցիալական, մշակութային և էթիկական մակարդակներում:

Կրթությունը ոչ միայն փոխանցում է գիտելիք, այլև ձևավորում է քննադատական մտածողություն, հաղորդակցական հմտություններ, սոցիալական պատասխանատվություն և համերաշխություն: Առանց այս արժեքների ժողովրդավարությունը վտանգվում է դառնալ ձևական և անկայուն:

Ուստի, ժամանակակից կրթական համակարգերը պետք է դուրս գան միայն գիտելիքների տրամադրման շրջանակներից և առաջնային համարեն այնպիսի քաղաքացի դաստիարակելը, որն ունակ է մասնակցել հանրային բանավեճին, գնահատել բազմազանությունը, պաշտպանել արդարությունը և կիսել պատասխանատվությունը հասարակության ապագայի համար:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Allen, Danielle.** *Talking to Strangers: Anxieties of Citizenship since Brown v. Board of Education.* – Chicago: University of Chicago Press, 2004. – 472 p.
2. **Balibar, Étienne.** *Citizenship.* – Cambridge: Polity Press, 2012. – 248 p.
3. **Barber, Benjamin.** *Strong Democracy: Participatory Politics for a New Age.* – Berkeley: University of California Press, 1984, 320 p.
4. **Biesta, Gert.** *Democracy and Education: An Educational Philosophy for the Future.* – Boulder: Paradigm Publishers, 2006. – 176 p.
5. **Dahl, Robert.** *Democracy and Its Critics.* – New Haven: Yale University Press, 1989. – 397p.
6. **Dewey, John.** *Democracy and Education: An Introduction to the Philosophy of Education.* – New York: Macmillan, 1916. – 434 p.
7. **Freire, Paulo.** *Pedagogy of the Oppressed.* – New York: Continuum, 1970. – 183 p.
8. **Gutmann, Amy.** *Democratic Education.* Princeton: Princeton University Press, 1987. – 324 p.
9. **Habermas, Jürgen.** *The Structural Transformation of the Public Sphere.* – Cambridge: MIT Press, 1962. – 301 p.
10. **Habermas, Jürgen.** *The Theory of Communicative Action.* – Boston: Beacon Press, 1984, Volumes I–II, 1. – 196 p.
11. **Held, David.** *Models of Democracy.* – Stanford: Stanford University Press, 1987. – 324 p.
12. **Jenkins, Henry.** *Confronting the Challenges of Participatory Culture.* Cambridge: MIT Press, 2009. – 145 p.
13. **Levinson, Meira.** *No Citizen Left Behind.* – Cambridge: Harvard University Press, 2012. – 400 p.
14. **Nussbaum, Martha.** *Not for Profit: Why Democracy Needs the Humanities.* – Princeton: Princeton University Press, 2010. – 178 p.
15. **Nussbaum, Martha.** *Creating Capabilities.* – Cambridge: Harvard University Press, 2011. – 237 p.
16. **Sen, Amartya.** *Development as Freedom.* – New York: Alfred A. Knopf, 1999. – 366 p.

Տժնա / Հանձնվել է՝ 23.09.2025  
Рецензирована / Գրախոսվել է՝ 30.09.2025  
Принята / Ընդունվել է՝ 07.10.2025